Պատմություն

Հակոբյան Նաիրա
Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան
Պողոսյան Վազգեն
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս
Խաչատրյան Աննա
Հոգեբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՍԻՄՎՈԼՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԷԹՆՈ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներկայացվում են անձի արժեհամակարգի ձևավորման որոշ առանձնահատկություններ: Տրվում է խնդրի սոցիալ-հոգեբանական ուսումնասիրվածության հակիրճ ակնարկ, շեշտադրվում է արժեհամակարգի ձևավորման նշանակությունը հասարակական փոխհարաբերությունների կառուցման տեսանկյունից: Քննարկվում է ավանդույթների և սիմվոլների դերն ու նշանակությունը անձի արժեհամակարգի ձևավորման համատեքստում, ինչպես նաև՝ ավանդույթների հիմնական գործառույթները, որոնք կարևորվում են հասարակայնորեն նշանակալի նորմերի ու վարքի պահպանման առումով:

Հիմնաբառեր. արժեհամակարգ, ավանդույթ, գործառույթ, հասարակություն, սոցիալականացում, սոցիալական իրավիճակ, սոցիալական համակարգ, սիմվոլներ, նորմեր, սոցիոմշակութային միջավայր:

Ներածություն

Իր կյանքի ընթացքում մարդը ձգտում է առանձնացնել առաջնայինը և երկրորդականը, կարևորը և ոչ կարևորը: Այն, ինչը մենք համարում ենք կարևոր և ճիշտ, ազդեցություն է գործում մեր որոշումների, վարքի ու շրջապատի հետ փոխհարաբերությունների վրա: Աստիճանաբար այդ հասկացությունները դառնում են արժեքների ձևավորման հիմք, ամրագրվում անձի կենսական փորձով և ուղղորդում են նրա գործունեությունը: Արժեքային կողմնորոշումների ամբողջությունը նպաստում է վարքի կայուն դրսևորումներին, ինչն արտահայտվում է անձի համապատասխան պահանջմունքների ու հետաքրքրությունների ուղղվածության մեջ:

Անհատական արժեքների ձևավորման, անձի սոցիալականացման ընթացքում նրանց ամբողջացման և համակարգման հարցադրումները մշտապես եղել են գիտնականների ուշադրության կենտրոնում. չէ՞ որ անհատական արժեքների ձևավորումը կարելի է դիտել որպես սոցիալական արժեքների յուրացման մի ուրույն գործընթաց:

Տեսական հիմունքներ

Ժամանակակից գրականության մեջ լայն կիրառում է ստացել ավանդույթների և սիմվոլների այն հասկացումը, որի շնորհիվ տվյալ էթնոսի անդամներն ունեն միևնույն էթնոնիմը և նման հատկանիշների համալիր, որի մեջ ներ են առնվում մշակույթի ընդհանրությունները, ընդհանուր ծագման մասին առասպելը, կոլեկտիվ ընդհանուր պատմական հիշողությունը՝ կապված որոշակի տարածքի հետ, և տիրապետում են համերաշխության ընդհանուր զգացումով: Ընդգծվում է նաև հարցի սուբյեկտիվ հոգեբանական կողմը, որն արտահայտվում է կոլեկտիվ գիտակցությամբ և առասպելաբանությամբ:

Հարկ է նշել, որ ավանդույթների ուսումնասիրության տեսական մոտեցումները կարող են համադրվել և դիտարկվել միասին՝ լրացնելով մեկը մյուսին: Ուստի, անձի արժեհամակարգի ձևավորման համատեքստում ավանդույթների և սիմվոլների վերաբերյալ հետազոտությունն իրականացվել է ներքոնշյալ ուսումնասիրությունների համեմատական վերլուծության միջոցով: Վերլուծության գլխավոր տարրերից է խնդրի ուսումնասիրության պատմական հայեցակետը, ինչը հնարավորություն է տալիս տարբեր ժամանակահատվածներով և, հետևապես, տարբեր հարցադրումներով քննարկել անձի արժեհամակարգի ձևավորման երևույթը: Նման հայեցակետն, իր հերթին, թույլ է տալիս ուսումնասիրել անձի արժեհամակարգի ձևավորման դրսևորումները՝ կախված նրանից, թե ինչպես է այդ անձը գիտակցում իրեն տվյալ սոցիալական միջավայրում, ինչ նշանակություն ունեն ավանդույթները անձի ինքնության ձևավորման գործընթացում, ինչն առավել կարևորվում է ժամանակակից հասարակությունների ինտեգրման միտումների համատեքստում (Шохин, 2006; Welzel, 2003, էջ 341–379): Ավանդույթների և սիմվոլների վերաբերյալ գրականության համեմատա-

կան վերլուծության արդյունքում ձևավորված եզրահանգումներն իրենց արտահայտությունը գտան տարբեր տարիքային խմբերում կազմակերպված այլ մեթոդական մշակումների մեջ: Մասնավորապես, սիմվոլների կիրառման ենթատեքստն ուսումնասիրվեց կոնտենտ-վերլուծության միջոցով, իսկ արդյունքները համեմատվեցին անձի արժեքային դիրքորոշումները բացահայտող Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» հարցարանի կիրառմամբ:

Արդյունքներ և քննարկում

Ռուսական գիտական ասպարեզում հետաքրքրությունը արժեհամակարգի և, մասնավորապես, արժեքների նկատմամբ ի հայտ եկավ 20-րդ դարի կեսերին, երբ հրատարակվեց Վ.Տուգարինովի աշխատությունը կյանքի և մշակույթի արժեքների վերաբերյալ (Тугаринов, 1960): Աստիճանաբար ձևավորվեցին Վ.Վասիլենկոյի և Վ.Տուգարինովի տեսակետները (Василенко, 1964; Тугаринов, 1960): Առաջին տեսակետի համաձայն, արժեքները որոշվում են իրականության օբյեկտների նշանակալիության ու օգտակարության նկատառումներով: Երկրորդ տեսակետը շեշտում էր հակառակը, արժեքների՝ որպես հասարակական իդեալներ ներկայանալու հանգամանքը, իսկ երրորդ տեսակետի հետևորդները ջանում էին համակցել այդ երկու բևեռային դիրքորոշումները:

Ներկայիս ռուսական գիտական միտքը հակվում է արժեքների արևմտյան հումանիստական մոտեցումներին և դիտում այն անձի սոցիալ-հոգեբանական դրսևորումների համատեքստում: Այսպես, Է.Լեոնտևը և Ս.Ռուբինշտեյնը քննում են անձը գործունեության ընթացքում, իսկ Դ.Ուզնաձեն շեշտում է անձի դիրքորոշումների կարևորությունը (Леонтьев, 2005; Рубинштейн, 1976; Узнадзе, 2000): Այդուհանդերձ, անձնային բնութագրերի մեջ կարելի է նշմարել արժեքների յուրահատուկ դրսևորումը: Բ.Անանևը այն ներկայացնում է որպես «կենսական ուղղվածություն», Է.Լեոնտևը արժեքները դիտում է որպես անձի գործունեությունը իմաստավորող տարր, իսկ Լ.Վիգոտսկին, սահմանելով զարգացման «սոցիալական իրավիճակ» հասկացությունը, շեշտադրեց սոցիալական միջավայրում անձի կայացման հանգամանքը (Леонтьев, 2005; Выготский, 1956): Բ.Անանևի կարծիքով, անձի սոցիալական դերերի և արժեքային կողմնորոշումների համակարգերը ձևավորվում են՝ հիմնվելով գերազանցապես անձի սոցիալական կարգավիճակի վրա (Ананьев, 1961): Նրա համոզմամբ սոցիալական կարգավիճակը, դերերը և արժեքային կողմնորոշումները որոշում են վարքի առանձնահատկությունները և դրդապատճառները ու, միաժամանակ՝ անձի հակումներն ու բնավորությունը:

Այսպես, արժեքների ձևավորման, արժեհամակարգի հստակեցման ամբողջ գործընթացը դիտարկվում է անձի կայացման և սոցիալականացման գործընթացների հետ միասին, կազմում նրա անբաժանելի մասը և պայմանավորում անձի վարքը:

Վերոնշյալ ուսումնասիրությունների սոցիալ-հոգեբանական կողմը

խնդիրը դիտարկում է որպես անձի կողմից հասարակայնորեն պայմանավորված արժեքների յուրացման երևույթ: Ս.Ռուբինշտեյնը, հետևաբար, հոգեբանության խնդիրը տեսնում էր արժեքների պահպանման մեջ: Իսկ Է. Լեոնտևը հոգեբանության գլխավոր խնդիրներից էր համարում գործունեությունը (Рубинштейн, 1976; Леонтьев, 2005):

Կյանքի ընթացքում որոշ արժեքներ ամրապնդվում են, իսկ որոշներն էլ՝ ձևափոխվում կամ արժեզրկվում: Արժեքների ձևավորման այդպիսի դինամիկան ենթադրում է անհատական արժեքների յուրահատուկ դասակարգում, բայց միևնույն ժամանակ ցույց է տալիս նաև հասարակական արժեքների պահպանման միտումը: Կարելի է ենթադրել, որ վերջինիս ընդգրկվածության աստիճանը մեծանում է անձի սոցիալականացման հետ մեկտեղ, երբ անձը յուրացնում է հասարակության մեջ ընդունված նորմերը, հենվում դրանց վրա իր առօրյա կյանքում:

Արժեքները թույլ են տալիս անձին գնահատել շրջակա աշխարհը, արժեքների միջոցով իրականության առարկաներն ու երևույթները բնութագրվում են իրենց հասարակական նշանակություններով: Ուստի, դրանք ներկայանում են անձի բարոյահոգեբանական նկարագրի միջոցով և ցուցադրում են, թե որքանով է նա կարևորում որոշակի գաղափարներն ու նպատակները:

Անձի արժեքները հիմնականում ձևավորվում են մանուկ հասակից: Ճիշտ վարվելու մասին պատկերացումներն ու խոսելու հմտությունները հաճախ հստակեցվում են ծնողների, ընտանիքի այլ անդամների ազդեցության ներքո: Ջարգացման հետ զուգընթաց երեխայի արժեքային համակարգի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողնում ընկերները, ուսուցիչները և այլոք. ընդլայնվում է արժեքների յուրացման ու ձևավորման շրջանակը, երեխան սկսում է ընտրողաբար կառուցել սեփական արժեքային համակարգը և համադրել այն հասարակական արժեհամակարգի հետ:

Դ.Լեոնտևը առանձնացնում է արժեքների ձևավորման հետևյալ գործընթացը. հասարակական իդեալները անձի գործունեության ընթացքում յուրացվում են և արտահայտվում հասարակայնորեն ընդունված վարքի նորմերի և անձի դիրքորոշումների կառուցվածքի մեջ: Անձի արժեքային կողմնորոշումների և հասարակական իդեալների միջանկյալ օղակը փոքր խմբի արժեքների համակարգն է (Леонтьев, 2002):

Արժեքների համակարգի տիպաբանության առաջին փորձերը կատարել է Գ.Օլպորտը և առանձնացրել արժեքների վեց տեսակ (Олпорт, 1998).

1. Տեսական արժեքներ՝ ռացիոնալ մտածողությունն ուղղորդող,
2. Տնտեսական արժեքներ՝ կենսական օգուտի առաջնայնությունը սահմանող,
3. Էսթետիկական արժեքներ՝ առավելագույնս ներդաշնակությունն ու արվեստը գնահատող,
4. Սոցիալական արժեքներ՝ մարդկային փոխհարաբերություններին առավել նշանակություն տվող,
5. Քաղաքական արժեքներ՝ իշխանությանը բացարձակ առաջնայ-

նություն հատկացնող,

6. Կրոնական արժեքներ՝ որոշակի կրոնական պատկերացումների համակարգին նախապատվությունը տվող:

Ներկայացնելով արևմտյան փիլիսոփայական և հասարակագիտական մտքի զարգացումների հակիրճ ակնարկը, անհրաժեշտ է նշել Վ.Դիլտեի հայացքները, որոնք մեծապես խթանեցին արժեքների գիտական դասակարգման և արժեհամակարգի ձևավորման հետագա ուսումնասիրությունները (Дильтей, 1992): Արժեքների հասարակական բնույթը սկսեց դիտարկվել մշակութային արժեհամակարգի բազմազանության մեջ: Այդ գաղափարների տրամաբանական շարունակությունը եղավ Է.Դյուրկհեյմի հայտնի կարծիքն այն մասին, որ հասարակության արժեհամակարգն առանձին անհատների արժեքային պատկերացումների բազմաշերտ մի ամբողջություն է, ինչն էլ, հետևապես, հանգում է «կոլեկտիվի» գիտակցմանն ու արժևորմանը (Дюркгейм, 1995):

Մ.Վեբերը և Տ.Պարսոնսը զարգացրեցին այդ գաղափարները՝ ներկայացնելով դրանք որպես անձի կողմից հասարակության արժեքների յուրացման հետևողական գործընթաց (Вебер, 1990; Парсонс, 1996): Արժեհամակարգի ձևավորման կարևորագույն հասկացություններ են դարձել «սոցիալական իրավիճակը», «սոցիալական համակարգը» և «սոցիոմշակութային միջավայրը»:

Հ.Հեկհաուզենը տալիս է իր տեսական դիրքորոշումը արժեհամակարգի ձևավորման վերաբերյալ՝ կապելով այն որևէ նպատակին հասնելու ձգտումի, ընդհանուր առմամբ, նպատակաուղղված գործունեության գաղափարի հետ, որը հեղինակը սահմանում է «նվաճման գործունեություն» եզրույթով (Хекхаузен, 1986):

Համաձայն Հ.Հեկհաուզենի, նվաճման գործունեությունը պետք է՝

1. Իրենից հետո թողնի շոշափելի արդյունք, որը պետք է գնահատվի որակապես կամ քանակապես, ընդ որում գնահատվող գործունեության նկատմամբ պահանջները չպետք է լինեն ոչ չափազանց ցածր, ոչ էլ չափազանց բարձր, այսինքն, որպեսզի գործունեությունը կարողանա ավարտվել հաջողությամբ, այն չպետք է իրագործվի առանց որոշակի ժամանակի և ջանքերի կիրառման:
2. Անհրաժեշտ է ունենալ որոշակի համեմատական սանդղակ և այդ սանդղակի սահմաններում պարտադիր համարվող որոշակի նորմատիվային մակարդակ:
3. Վերջապես, գործունեությունը պետք է սուբյեկտի համար լինի ցանկալի և նրա արդյունքը պետք է ստանա հենց ինքը՝ սուբյեկտը:

Արժեհամակարգի ձևավորման մեկ այլ առանձնահատկություն կարելի է նշել՝ ներկայացնելով արժեքների ևս մի դասակարգում. բազային և ինստրումենտալ արժեքներ: Առաջին խմբում են ընդգրկվում համամարդկային, բարոյական նորմերը, որոնք, ըստ երևույթին, կարևորվում են ցանկացած մշակույթում: Դրանք են մարդկային արժանապատվությունը, սերը, ընկերությունը, իրավահավասարությունը և այլն: Երկրորդ խմբին են պատ-

կանում կոնկրետ վարքային իմաստ ներառող արժեքները, որոնք գերազանցապես արտահայտվում են վարքի հատկանիշի տեսքով, նրանք ավելի ճկուն են ու փոփոխական, կախված կոնկրետ սոցիալական իրադրությունից: Դրանցից են «հավատարիմ», «քաղաքավարի», «գիտակ» և այլ հատկանիշներով արտահայտվող արժեքները: Արժեքների այս խմբի ձևավորումը մեծապես կախված է նոր փորձի յուրացումից և ենթակա է փոփոխման:

Արժեքների բացահայտման, արժեհամակարգի ձևավորման գործընթացը նպաստում է անձի դիրքորոշումների հստակեցմանը: Բացահայտված և գիտակցված արժեքները դառնում են նախընտրելի, ձեռք են բերում կայուն և հետևողական բնույթ:

Արժեհամակարգի ձևավորման երկարատև գործընթացներ են առկա արժեքների ուսումնասիրությունն ու գնահատումը, նոր իրավիճակում ինքնադրսևորման նորովի ընկալումն ու արժևորումը: Անհրաժեշտ պայման է հասարակությունում անձի նոր ձևավորվող դիրքորոշումների այնպիսի ներկայացումն ու շրջանառումը, որոնք դառնում են հասարակայնորեն կարևորվող և ընդունելի:

Այսպիսով, անձի արժեհամակարգը ձևավորվում է հասարակական փոխհարաբերությունների ներքո և փոխպայմանավորվում դրանցով: Այն չի վերածվում հասարակության և աշխարհի մասին հախուռն պատկերացումների, այլ ներկայանում է որպես որոշակի կառուցվածք, որը հիմնված է արժեքների առաջնայնության սկզբունքի վրա: Այդ սկզբունքը անձի արժեհամակարգի ձևավորման կարևորագույն բնութագիրն է: Անձի կողմից որևէ արժեքի ընդունումն արդեն իսկ ենթադրում է ամբողջ համակարգի դասակարգում՝ ըստ տվյալ իրավիճակում առաջնայնության սկզբունքի:

Արժեհամակարգի բազմաշերտ կառուցվածքը հնարավորություն է տալիս տարաբնույթ գործառույթների իրականացմանը: Արժեքները, լինելով անձի դիրքորոշումների ձևավորման և դասակարգման հիմք, օգնում են անձին գրավել որոշակի հասարակական դիրք և ձևավորվում են անձի սոցիալականացման ընթացքում:

Անձի արժեհամակարգի ձևավորման գործընթացը մեր կողմից քննարկվում է ավանդույթի ինստիտուտի ծիսասովորութային կենսագործունեության տեսանկյունից: Այն ստանում է նշանային իմաստավորում, ինչն իր հերթին արտահայտվում է անձի արժեհամակարգում:

Ավանդույթները արտահայտում են կայուն հասարակական հարաբերությունները: Դիտարկելով դրանք սոցիալական գործառույթների տեսանկյունից, իրավամբ կարելի է եզրակացնել, որ ավանդույթները ապահովում են մարդկանց միջև փոփոխվող և զարգացող փոխհարաբերությունների կայունությունը: Դա ավանդույթների կարևորագույն ընդհանուր գործառույթն է: Հասարակական հարաբերություններում առանց կայունության չի կարող լինել ոչ մի զարգացում և փոփոխություն: Ուստի, առանց ավանդույթի հասարակական հարաբերություններում չի կարող տեղի ունենալ ոչ մի զարգացում: Ապահովելով վերջինների կայունությունը և ստաբիլ վիճակը, ավանդույթը, այդպիսով, ծառայում է որպես հասարակական

կեցության անհրաժեշտ պայման: Ավանդույթում մշտապես փոփոխվող հասարակական հարաբերությունները ամրապնդվում են, վեր են ածվում հաստատուն դադարի վիճակի: Ավանդույթներում արտահայտություն են գտնում հասարակայնորեն նշանակալի նորմերն ու վարքը, ազգային հիմնարար արժեքներն ու դիրքորոշումները:

Ավանդույթների գործառույթները

Ավանդույթների բնույթը չի կարող բացահայտվել խորապես, եթե չհետազոտվեն դրանց գործառույթները և, համապատասխանաբար, համակարգված վերլուծությունը չլրացվի գործառութային վերլուծությամբ: Նման վերլուծության անհրաժեշտությունը թելադրված է նրանով, որ ավանդույթներն ունեն համակարգային-գործառութային բնույթ: Քանի որ «գործառույթ» հասկացությունը բազմանշանակ է, պայմանականորեն դրա տակ հասկանում ենք այն համակարգային նշանակումը, որը հանդես է գալիս օբյեկտի ծառայողական դերում (Плахов, 1982, էջ 47):

Ավանդույթները կարելի է բնորոշել որպես երևույթներ, որոնք արտահայտվում են սոցիալական համակարգերում, քանի որ հասարակությունից դուրս դրանք գոյություն չունեն: Այդ պատճառով անհրաժեշտ է տարանջատել ավանդույթների ընդհանուր կամ տիպային, և յուրահատուկ՝ մասնավոր գործառույթները և դրանց որոշակի նորամուծությունները:

Ընդհանուր գործառույթները կապված են համակարգային օրինաչափությունների հետ, որոնք արտահայտվում են առանց բացառության բոլոր ավանդույթներում: Ավանդույթներն ունեն նաև յուրահատուկ՝ ֆասցինացիայի և ստիմուլյացիայի գործառույթներ: Այդ հատկությունների շնորհիվ ավանդույթները կարող են «ձգել» անհատներին տարբեր խմբերի, սոցիալական միավորումների և կոլեկտիվների մեջ, ունեն արտահայտչական-զգայական ձևեր և այդ պատճառով մարդկանց վրա թողնում են էմոցիոնալ տպավորություն: Այստեղից էլ երևում է ավանդույթների ազդեցությունը կոլեկտիվներում մարդկանց փոխհարաբերությունների մակարդակի և բնույթի վրա (Плахов, 1982):

Կարելի է առանձնացնել ավանդույթների հետևյալ գործառույթները, որոնք նույնպես կարևորվում են անձի արժեհամակարգի ձևավորման համատեքստում.

Ինտեգրատիվ գործառույթ. ամբողջացնելով անհատների վարքը և գործունեությունը, նրանց մտքերն ու զգացմունքները, ուղղորդելով սոցիալական խմբերի և ինստիտուտների ջանքերը, ավանդույթը կարող է աջակցել տվյալ հասարակության կայունությանը:

Ռեգուլյատիվ գործառույթ. ազգային մշակութային գաղափարները, կարծրատիպերը և ավանդապես կրկնվող գործունեությունը հանդես են գալիս մարդկանց վարքի կարգավորիչների դերում:

Կոմունիկատիվ գործառույթ. ավանդույթը ծառայում է որպես անհատների հաղորդակցման միջոց: Այն, հիմնված լինելով հասարակական արժեքների վրա, փոխանցվում է սերնդեսերունդ և ապահովում հասարա-

կությունում ընդունված արժեհամակարգի կայունությունը (Яблоков, 1972, էջ 33–39):

Ուստի, ավանդույթների ինստիտուտը, ընդհանուր առմամբ, այնքանով է «հավերժ», որքանով «հավերժ» է հասարակությունը:

Ավանդույթները կարելի է բաժանել «մեռած» և «կենդանի» ավանդույթների: Առաջինները կարող են դառնալ արդիական որոշակի սոցիալական պայմաններում: Մեր ժամանակներում դրանք են, օրինակ, նախնադարյան և ստրկատիրական հասարակությունների ավանդույթները: Երկրորդներն, ընդհակառակն, անընդմեջ ակտուալիզացվում են: Սակայն ավանդույթների վերածննդի ընթացքը միանշանակ չէ: «Կենդանի» ավանդույթները կարող են լինել գործող և ընդհակառակը՝ հնացած: Ավանդույթի գործունեության տակ հասկացվում են նրա բազմաթիվ գործառույթները՝ սոցիալական կապերի գործառույթը, սոցիալական փորձի փոխանցման, տեղեկատվության փոխանցման, կառուցողական և սահմանադրական գործառույթները, մշակութաստեղծ և հասարակական հարաբերությունները կարգավորող գործառույթները, ընդհանուր առմամբ՝ արժեհամակարգի ձևավորման բազմաշերտ գործառույթները (Музиль, 1994; Витгенштейн, 2010; Малиновский, 1998): Ավանդույթների և սովորությունների ինստիտուտը առաջանում է պատմության զարգացման ավելի վաղ փուլում, քան իրավական օրենքները: Ավանդույթները, ինչպես ասվեց, ներառվում են սոցիալական նորմերի համակարգի մեջ և մասնակցում անձի արժեհամակարգի ձևավորման գործընթացին (Плахов, 1982):

Սերունդների ավանդույթների պահպանումը հնարավորություն է տալիս, այս իմաստով, պահպանել արժեքների որոշակիությունը և հաջորդականությունը, որոնք, վերարտադրելով անցյալը, կարծես թե պատասխանատվություն են կրում նախորդ սերունդների նկատմամբ՝ ցուցադրելով համապատասխան հարգանք: Այն նաև հող է նախապատրաստում հաջորդ սերունդների համար, որոնք կգան փոխարինելու ապրողներին: Սերունդների այսպիսի կենդանի հաջորդականությամբ պահպանվում են ազգի մշակութային արժեքները: Այդ արժեքները պայմանավորում են կոլեկտիվ գործընթացների հետ անհատի ստեղծագործության սինթեզով, ինչը մարդկանց համախմբում է մեկ ամբողջության մեջ (Василенко, 1964, էջ 17–21):

Ավանդույթները ներկայանում են տարբեր մակարդակներով: Նախևառաջ, դրանք տեսնում ենք հայ էթնոսի բանահյուսական գրավոր և բանավոր աղբյուրներում որպես ազգային մտածելակերպի կարծրատիպեր: Երկրորդ, ավանդույթի ինստիտուցիոնալ ձևերը հանդիպում ենք հաղորդակցման ընթացքում, որի արդյունքում ձևավորվում է հասարակական կարծիքը երևույթի նկատմամբ: Այն ուսումնասիրելիս կարելի է առանձնացնել տարբեր սեռատարիքային, կրթական և սոցիալական խմբերի պատկերացումները խնդրի շուրջ: Այսպիսով, հնարավոր է դառնում բացահայտել հասարակությունում անձանց գործունեության տարբեր գործառույթները և տալ տվյալ երևույթի սոցիալ-հոգեբանական գնահատականը: Ուրեմն, ավանդույթի գործառույթների շրջանակներն ուրվագծվում են անձի հասկացու-

թային, նշանային համակարգով, որոնք արտահայտվում են «անձ – հասարակություն» հարաբերություններով (Платонов, 2001; Кон, 1970): Վարքի նորմերն ու կաղապարները ֆիքսված են լեզվական նշանակությունների մեջ, որոնց շնորհիվ գործում է ավանդույթը և որոնց ծագումը և կառուցվածքը հետաքրքրել են լեզվաբաններին, փիլիսոփաներին, մշակութաբաններին և հոգեբաններին: Ուստի, սոցիալ-հոգեբանական տեսանկյունից կարևորվում են ավանդույթներում արտահայտված հասարակության հետ անձանց փոխգործողության ձևերը և եղանակները, որոնք ստանում են «նորմավորված միջնորդության երանգ» (Леонтьев, 2005): Դրանով էլ բնորոշվում է ավանդույթի որոշակի ազդեցությունը անձի արժեհամակարգի ձևավորման, «անձ-հասարակություն» փոխհարաբերությունների կարգավորման ու կայունացման գործում: Հասարակական կայունացմանն ու ստաբիլությանը միտված ավանդույթի գործառույթների քննությունն, այսպիսով, հիմք է հանդիսանում անձի արժեհամակարգի հետագա խորը ուսումնասիրությունների համար:

Նոր սերնդի սոցիալականացման գործընթացում իրենց կարևոր տեղն ունեն նաև ազգային սիմվոլները: Հոգեբանական գիտությունը սիմվոլը բնութագրում է որպես պատկեր, որը մի շարք այլ, որպես կանոն, բավականին բազմապիսի պատկերների, բովանդակությունների, հարաբերությունների ներկայացուցիչն է: Սիմվոլը համարժեք է ,,նշան,, հասկացությանը, սակայն դրանք ունեն տարբերություններ: Նշանի համար բազմիմաստությունը դիտվում է որպես բացասական երևույթ. Ինչքան միանշանակ է վերծանվում նշանը, այնքան կառուցողաբար կարող է այն օգտագործվել: Սիմվոլն, ընդհակառակը՝ ինչքան ավելի բազմիմաստ է, այնքան բովանդակալից է (Պողոսյան, 1994; Узнадзе, 2000):

Ազգային սիմվոլների հոգեբանական բնույթի մասին որոշակի տեսակետ է առաջադրել Է. Նալչաջյանը (2001: 168): Նրա հիմնական գաղափարն այն է, որ յուրաքանչյուր ազգային սիմվոլ տվյալ ազգի բնավորության, իր, որպես սոցիալական խմբի, մասին ունեցած պատկերացումների և տարբեր բնական ու սոցիալական երևույթների նկատմամբ վերաբերմունքի խտացված դրսևորումն է:

Եզրակացություն

Զարգացող և հասունացող անհատի սոցիալականացումը, ինչպես հայտնի է, այն տևական գործընթացն է, որի շնորհիվ երեխան ընկալում և ներքնայնացնում է հասարակության նորմերն ու արժեքները, դերերն ու դիրքորոշումները, և ի վերջո դառնում է հասուն անձնավորություն: Քանի որ ձևավորվող նոր կրթական համակարգի խնդիրը ոչ թե պարզապես հասուն մարդու, այլ հասուն և լիարժեք հայի ձևավորումն է, ուստի առաջնահերթ խնդիր է դառնում այն, թե ինչպես կարելի է օգտագործել ազգային սիմվոլները այդ կարևորագույն խնդիրը լուծելու համար: Մասնավորապես, ուսումնական ինչ նյութեր պետք է ընդգրկվեն դպրոցական և բուհական դասագրքերում՝ օժանդակելու համար դպրոցականների և ուսանողների

ազգային սոցիալականացմանը:

Ավանդույթների և սիմվոլների գործառութային էթնոհոգեբանական ակնարկը ուրվագծեց խնդրի ուսումնասիրման տեսական հիմքերը և ներկայացրեց անձի սոցիալականացման և զարգացման ընթացքում սոցիալապես կարևորվող նորմերի՝ արժեհամակարգում ամրապնդման հրամայականը:

Օգտագործված գրականության ցանկ

Նալչաջյան Է.Է. (2001). *Էթնիկական հոգեբանություն,* Երևան:

Պողոսյան Վ.Վ. (1994). *Ազգային սիմվոլները և նոր սերնդի սոցիալականացումը,* ,,ՀԱՅՔ,, հաստատության Տեղեկագիր, թիվ 12:

Ананьев Б.Г., Ломов Б.Ф. (1961). *Проблемы восприятия пространства и времени*, Ленинград.

Бехтерев В.М. (1994). *Избранные работы по социальной психологии*, Москва.

Василенко В. А. (1964). *Ценности и оценка,* Киев.

Вебер М. (1990). *Избранные произведения*, Москва.

Витгенштейн Л. (2010). *Культура и ценность. О достоверности,* Москва.

Выготский Л.С. (1956). *Избранные психологические исследования,* Москва.

Дильтей В. (1992). *Описательная психология* // История психологии, Москва.

Дюркгейм Э. (1995). *Социология. Её предмет, метод, предназначение,* Москва.

Кон И.С. (1970). *Люди и роли,* Москва.

Леонтьев А. (2005). *Психология общения,* Москва.

Леонтьев Д.А. (2002).*Самоактуализация как движущая сила личностного развития: историко-критический анализ,* в кн.: Леонтьев Д.А. (ред.), Современная психология мотивации, Москва.

Малиновский Б. (1998). *Магия, наука и религия,* Москва.

Музиль Р. (1994). *Человек без свойств,* в 2-х кн., т.1, Москва.

Олпорт Г. (1998). *Личность в психологии,* Москва.

Парсонс Т. (1996). *Понятие общества: компоненты и их взаимоотношения* // Американская социологическая мысль, Москва.

Платонов Ю.П. (2001). *Этническая психология,* СПб.

Плахов В.Д. (1982). *Традиции и общество,* Москва.

Рубинштейн С. Л. (1976). *Проблемы общей психологии,* Москва.

Тугаринов В.П. (1960). *О ценностях жизни и культуры,* Ленинград.

Узнадзе Д. Н. (2000). *Установка у человека. Проблема объективации* // Психология личности в трудах отечественных психологов, – СПб., Питер.

Хекхаузен Х. (1986). *Мотивация и деятельность,* Т. 1, Москва.

Шохин В.К. (2006). *Философия ценностей и ранняя аксиологическая мысль,* Москва.

Яблоков И.Н. (1972). *Методологические проблемы социологии религии,* Москва.

Welzel C., Inglehart R., Klingemann H.-R. (2003). *The theory of human development: A cross-cultural analysis.* // European Journal of Political Research, 42(3).

References

Nalchadjyan A.A. (2001). *Etnikakan hogebanutyun* [Ethnic Psychology], Yerevan (In Arm.).

Poghosyan V.V. (1994). *Azgayin simvolnery ev nor serndi socialakanacumy* [National Symbols and Socialization of New Generation], “Hayk” hastatutyan teghekagir-Bulletin of “HAYK” Institution, #12 (In Arm.).

Ananyev B.G., Lomov B.F. (1961). *Problemy wospriyatiya prostranstva I vremeni* [Problems of Perception of Space and Time], Leningrad (In Russ.).
Bekhterev V.M. (1994). *Izbrannye raboty po socialnoy psikhologii* [Selected Works on Social Psychology], Moscow (In Russ.).
Vasilenko V.A. (1964). *Cennosti I ocenka* [Values and Evaluation], Kiev (In Russ.).
Weber M. (1990). *Izbrannye proizvedeniya* [Selected Works], Moscow (In Russ.).
Wittgenstein L. (2010). *Kultura I cennost. O dostovernosti* [Culture and Value. About Reliability], Moscow (In Russ.).
Vigotskiy L.S. (1956). *Izbrannye psikhologicheskie issledovaniya* [Selected Psychological Research], Moscow (In Russ.).
Dilthey W. (1992). *Opisatelxnaya psikhologiya* [Descriptive Psychology], Istoriya psokhologii–History of Psychology, Moscow (In Russ.).
Durkheim E. (1995). *Sociologiya. Eyo predmet, metod, prednaznachenie* [Sociology. Its Subject, Method, Purpose], Moscow (In Russ.).
Kon I.S. (1970). *Lyudi I roli* [Persons and Roles], Moscow (In Russ.).
Leontev A. (2005). *Psikhologiya obsheniya* [Communication Psychology], Moscow (In Russ.).
Leontev D.A. (2002). *Samoaktualizacia kak dvijushaya sila lichnostnogo razvitiya: istoriko-kriticheskij analiz* [Self-Actualization as a Driving Force of Personal Development: Historical and Critical Analysis], Sovremennaya psikhologiya motivacii–Contemporary Psychology of Motivation, Moscow (In Russ.).
Malinovskiy B. (1998). *Magia, nuka I religiya* [Magic, Science and Religion], Moscow (In Russ.).
Muzil R. (1994). *Chelovek bez svoystv* [a Person without Attributes], in 2 vol., vol. 1, Moscow (In Russ.).
Olport G. (1998). *Lichnost v psikhologii* [Personality in Psychology], Moscow (In Russ.).
Parsons T. (1996). *Ponyatie obtshestva: komponenty I ikh vzaimootnosheniya* [Term of Society: Components and Their Interrelations], Amerikanskaya sociologicheskaya mysl–American Sociological Mind, Moscow (In Russ.).
Platonov Yu.P. (2001). *Etnicheskaya psikhologiya* [Ethnic Psychology], Saint Petersburg (In Russ.).
Plakhov V.D. (1982). *Tradicii I obtshestvo* [Traditions and Society], Moscow (In Russ.).
Rubinshteyn S.L. (1976). *Problemy obtshey psikhologii* [Problems of General Psychology], Moscow (In Russ.).
Tugarinov V.P. (1960). *O cennostyakh jizni I kultury* [About Values of Life and Culture], Leningrad (In Russ.).
Uznadze D.N. (2000). *Ustanovka u cheloveka. Problema obyektivacii* [Personality Setting. Problem of Objectification]. Psikhologiya lichnosti v trudakh otechestvennykh psikhologov– Psychology of Personality in the Works of Native Psychologists. Saint Petersburg (In Russ.).
Heqhauzen Kh. (1986). *Motivacia I deyatelnost* [Motivation and Activity], vol.1, Moscow (In Russ.).
Shokhin V.K. (2006). *Philosophiya cennostey I rannyaya aksiologicheskaya mysl* [Philosophy of Values and Early Axiological Mind], Moscow (In Russ.).
Yablokov I.N. (1972). *Metodologicheskie problem sociologii religii* [Methodological Problems of Sociology of Religion], Moscow (In Russ.).
Welzel C., Inglehart R., Klingemann H.-R. (2003). *The theory of human development: A cross-cultural analysis. //* European Journal of Political Research, 42(3). (In Eng.)

Акопян Наира
Доктор психологических наук, профессор,
Декан Международного научно-образовательного центра НАН РА,
Погосян Вазген
Кандидат психологических наук, доцент,
преподаватель Международного научно-образовательного центра НАН РА,
Хачатрян Анна
Кандидат психологических наук,
преподаватель Международного научно-образовательного центра НАН РА,

ФУНКЦИОНАЛЬНЫЙ ОБЗОР ТРАДИЦИЙ И СИМВОЛОВ В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ ЛИЧНОСТИ. ЭТНО-ПСИХОЛОГИЧЕСКИЙ ОБЗОР

В статье представлены некоторые особенности формирования системы ценностей личности. Дается краткий обзор социально-психологического исследования проблемы, подчеркивается важность формирования системы ценностей с точки зрения выстраивания общественных отношений. Представлена роль и значение традиций и символов в контексте формирования системы ценностей личности. Обсуждаются основные функции традиций, которые важны с точки зрения поддержания социально значимых норм и поведения.

Ключевые слова: система ценностей, традиция, функция, общество, социализация, социальная ситуация, социальная система, символы, нормы, социокультурная среда.

Hakobyan Naira
Doctor of Psychological Sciences, Professor,
Dean of the International Scientific-Educational Center
Poghosyan Vazgen
Candidate of Psychological Sciences, Dozent,
Lecturer of the International Scientific-Educational Center
Khachatryan Anna
Candidate of Psychological Sciences,
Lecturer of the International Scientific-Educational Center

FUNCTIONAL REVIEW OF TRADITIONS AND SYMBOLS IN THE CONTEXT OF FORMATION OF PERSON'S VALUE SYSTEM. ETHNO-PSYCHOLOGICAL REVIEW

This article studies some peculiarities of value formation. A brief review of the socio-psychological research is also presented. Special attention is paid to the values from the point of view of social relationships' formation. The given

article also touches upon the role and significance of traditions and symbols in the context of values formation. Also, the main functions of tradition important for sociable norms and behavior conservation are outlined.

Key words: value system, tradition, function, society, socialization, social situation, social system, symbols, norms, socio-cultural environment.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. փետրվարի 17-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. մարտի 1-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. մարտի 25-ին: